

Բ. ՌԱՍՍԵԼ

ԻՆՉՈՒ
ԵՍ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԶԵՄ

ՀԱՅՊԵՏՀՐԱՑ
ԵՐԵՎԱՆ 1960

Б. РАССЕЛ
ПОЧЕМУ Я НЕ ХРИСТИАНИН
(На армянском языке)
Армянское государственное издательство
(Айпетрат), Ереван, 1960

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Ներկա բրոշյուրը գրել է անգլիացի ժամանակակից նշանավոր գիտնական և փիլիսոփա-հումանիստ թերառան Ռասսելը, որը հանդես է գալիս հանուն խաղաղության ժողովուրդների միջև։ Այստեղ Ռասսելը հանդես է գալիս որպես XVIII—XIX դարերի բուժուական ուսուցիչ և աթեիզմի տրադիցիաների տաղանդավոր շրունակողներից մեկը։

Բրոշյուրում շափազանց վառ գույներով և սրամտությամբ քննադատվում և մերկացվում է քրիստոնեությունը։ Բ. Ռասսելը հերքում է աստծո գոյությունն ապացուցելու օգտին գործածական աստվածաբանական փաստարկները, հատկապես այն փաստարկումը, որը հիմնվում է բարոյականության վերացական, անկենսունակ սկզբունքների վրա։ Նա կասկածի տակ է առնում Քրիստոսի պատմականության վերսիան և ցույց է տա-

լիս, որ ավետարանի այդ առասպելական դեմքը չի կա րող կոչվել ո՛չ կատարյալ, ո՛չ ազնվաբարո, ինչպես ճգնում են ներկայացնել նրան քրիստոնեական աստվածաբանները:

Անգլիական փիլիսոփիան նշում է, որ աստծո հանդեպ կրոնական հավատը հիմնվում է երկյուղի վրա, մատնանշում է եկեղեցու հետադիմական դերը և մերկացնում է քրիստոնեական բարոյականության երեսպաշտությունը: Նա կոչ է անում ռեալիստական և օպտիմիստական հայացքով նայել աշխարհի վրա:

Միաժամանակ Ռասսելի կողմից կրոնական հավատի քննադատությունն անհետևողական է: Դա կատարվում է բուրժուական աշխարհայացքի շրջանակներում: Բ. Ռասսելի համար պարզ չեն կրոնի սոցիալական արմատները և դասակարգային էությունը: Չնայած այն բանին, որ Բ. Ռասսելը փորձում է կրոնը քննադատել գիտության և ամբողջ բանականության դիրքերից, սակայն այդ քննադատությունը թուլանում է նրա սուրյեկտիվ-իդեալիստական և ագնոստիկ-սկիպտիկական հայացքների պատճառով: Այսպես, Բ. Ռասսելը գտնում է, որ մեր իմացությունը հիմնվում է հավատի վրա, թեև նրա հասկացողությամբ այդ հավատը կրոնական հավատ չէ, այլ էմպիրիկ եղանակով հիմնավորված իմացությանը հակառակ մի ինչ-որ բան է: Օրինաշափության և պատճառականության հասկացությամբ Բ. Ռասսելը պաշտպանում է կոնվենցիոնալիզմի տեսակետը:

Սովետական ընթերցողի ուշադրությանն առաջարկ-
վող Բերտրան Ռասսելի այս փոքրիկ երկը ամբողջու-
թյամբ վերցրած հետաքրքիր է որպես կրոնի նկատմամբ
ժամանակակից բուրժուական ուսցիոնալիստական քրն-
իադատության մի նմուշ:

Սույն հրատարակության մեջ վեր-
արտադրված դասախոսությունը կար-
դացվել է Բաստերսիի¹ քաղաքապետա-
րանի շենքում 1927 թվականի մայիսի
6-ին կիրակի օրը, Ազգային աշխարհիկ
ընկերության Հարավ-Լոնդոնյան բաժան-
մունքի նախաձեռնությամբ։ Դասախոսու-
թյունը բրոշյուրի ձևով հրապարակվում
է բազմաթիվ ընկերների պնդումով։
Անհրաժեշտ է ավելացնել, որ դասախո-
սության մեջ արտահայտված քաղաքա-
կան և այլ դատողությունների համար
պատասխանատվությունը բացառապես
ընկնում է հեղինակի վրա։

1 Բատտերսին կոնցոնք հարավային լրջաննէ,
մեկն ոյն շն մայրաքաղաքային օկրուզներից
(քաղաքներից), որոնք կազմում են կոնցոնյան
կոմունիյունը։ Մասն ուսու թարգմ։

Իմ այսօրվա դասախոսության նյութը ձեզ արդեն
հայտնի է նախագահի ճառից՝ «հնչու ես քրիստոնյա
շեմ»:

Գուցե լավ կլիներ հենց սկզբից փորձել պարզելու
«քրիստոնյա» բառի նշանակությունը: Բանն այն է, որ
մեր օրերում մեծ քանակությամբ մարդիկ այդ բառից
օգտվում են չափազանց անորոշ իմաստով: Որոշ մար-
դիկ քրիստոնյա ասելով նկատի ունեն միայն այն մար-
դուն, որը ձգտում է վարել օրինավոր ապրելակերպ: Իմ
կարծիքով այդ իմաստով քրիստոնյաներ կճարվեն բոլոր
կրոններում և աղանդներում. բայց ինձ թվում է, որ դա
բառի ճիշտ իմաստը չէ, թեկուզ հենց այն պատճառով,
որ դրանից բխում է, որ իբր թե այն մարդիկ, որոնք
քրիստոնյաներ չեն՝ բոլոր բուդդայականները, կոնֆու-
ցիականները, մուսուլմանները և այլն, չեն աշխատում
վարել օրինավոր ապրելակերպ: Ինձ համար «քրիստոն-

յա» բառը բնավ չի նշանակում այնպիսի մարդ, որն իր հնարավորությունների շափով աշխատում է ապրել ազ-նիվ։ Ես ենթադրում եմ, որ նախքան քրիստոնյա կոչվելու իրավունք ձեռք բերելը դուք պետք է լինեք որոշ քա-նակությամբ հավատալիքների համախոհ։ Ճիշտ է, այժմ «քրիստոնյա» բառը կորցրել է իր այն լիարժեք նշանա-կությունը, որն ուներ սուրբ Ավգուստինի և սուրբ Թոմա Աքվինացու ժամանակներում։ Այն օրերում, երբ մարդը հայտարարում էր, որ նա քրիստոնյա է, բոլորը գիտեին, թե հատկապես ի՞նչ է ուզում նա ասել դրանով։ Քրիս-տոնյա լինել նշանակում էր ընդունել խստագույն ձևով որոշված կրոնական պատկերացումների ողջ միակցու-թյունը և համոզմունքի ամրող ուժով հավատալ այդ կրոնական պատկերացումների յուրաքանչյուր մասնի-կին։

Ի՞նչ է ՔՐԻՍՏՈՆՅԱՆ

Այժմ դրությունը բոլորովին այլ է։ Մենք ստիպված ենք մի քիչ ավելի անորոշ լինել քրիստոնեության մեր ըմբռնումներով։ Բայց և այնպես ես ենթադրում եմ, որ կարելի է հիշատակել երկու տարրեր կետեր, որոնց ըն-դունումը միանգամայն պարտադիր է իրենց քրիստոնյա կոչողների համար։ Առաջին կետը, որ դոգմատիկ կար-գի է, այն է, որ դուք պարտավոր եք հավատալ աստծուն և անմահությանը։ Եթե դուք չեք հավատում այդ երկու-

նին, ապա իմ կարծիքով, դուք իրավունք չունեք քրիստոնյա կոչվելու Երկրորդ՝ ինչպես հետեւում է հենց քրիստոնյա բառից, դուք պետք է համամիտ լինեք որոշ ձևով Քրիստոսին հավատալուն ջէ՝ որ մուսուլմանները, օրինակի համար, նույնպես հավատում են աստծուն և անմահությանը, բայց և այնպես նրանք իրենց քրիստոնյա շեն անվանի: Ես կարծում եմ, որ դուք, որպես մինիմում, պիտի համամիտ լինեք հավատալու, որ Քրիստոսը, եթե աստվածային անձնավորություն չի եղել, գոնե եղել է մարդկանցից լավագույնը և իմաստագույնը: Եթե դուք տրամադիր շեք ընդունելու այդ հավատը Քրիստոսի նկատմամբ, ապա, ըստ իս, դուք ոչ մի իրավունք չունեք քրիստոնյա կոչվելու իհարկե, գոյություն ունի «քրիստոնյա» բառի մի այլ իմաստ ևս, որը դուք կգտնեք Ուայտեկերի «օրացուց»¹-ում, ինչպես նաև աշխարհագրության գրքերում, որտեղ հաստատվում է, որ Երկրագնդի բնակչությունը բաժանվում է քրիստոնյաների, մուսուլմանների, բողդայականների, կոապաշտների և այլն. այդ իմաստով մենք բոլորս քրիստոնյաներ ենք: Աշխարհագրության գրքերը մեզ քննարկում են խմբովին, բայց դա բառի դուստ աշխարհագրական իմաստն է, որը, կարծում եմ, մենք կարող ենք ուղղակի ուշադրության շառնել: Ուստի նպատակ ունենալով բացատրելու

¹ Անդիհայում ժողովրդականություն վայելող տեղեկատու տարեգիրք: Ման. ոուս. բարգմ.:

ձեզ, թե ինչու ես քրիստոնյա շեմ, ես ինձ պարտավոր եմ համարում բացատրել ձեզ տարբեր բաներ. առաջին՝ ինչու ես շեմ հավատում աստծուն և անմահությանը և երկրորդ՝ ինչու ես Քրիստոսին շեմ համարում մարդկանցից լավագույնը և իմաստագույնը, թեև ես էլ ընդունում եմ նրա բարոյական առաքինությունների շափազանց բարձր աստիճանը:

Եթե ես կարողացա ընդունել քրիստոնեության այս-
շափի առաձգական բնորոշումը, ապա դրանով ես բացա-
ռապես պարտական եմ այն արդյունավետ ջանքերին,
որոնք անցյալում ձեռնարկվել են ոչ հավատացյալների
կողմից: Ինչպես ես արդեն նշել եմ, քրիստոնեություն
հասկացողությունը հնում ուներ շատ ավելի լիարժեք
իմաստ: Օրինակ՝ նա իր մեջ ընդգրկում էր դժոխքին հա-
վատալը: Մինչև ամենավերջին ժամանակները դժոխա-
յին հավիտենական կրակին հավատալը կազմում էր
քրիստոնեական դավանագիտության անհրաժեշտ մա-
սր: Մեր երկրում, ինչպես դուք գիտեք, Գաղտնի խոր-
հրդի որոշմամբ դժոխքին հավատալը քրիստոնեական
դավանագիտության անհրաժեշտ մասը չի համարվում:
Ճիշտ է, Քենտրոնական և Յորքի արքեպիսկոպոսները շնա-
նաշեցին այդ որոշումը, բայց մեր երկրում պաշտոնա-
կան կրոնը սահմանվում է պառլամենտի կողմից ըն-
դունված օրենքներով, և հենց այդ պատճառով Գաղտնի
խորհրդին հաջողվեց հաղթել նորին պայծառափայլու-
թյուններին և դժոխքին հավատալը դադարեց քրիստոն-

յաների համար պարտադիր լինելուց։ Ահա թե ինչու ես շեմ պնդելու, որ քրիստոնյան անպայման պետք է հավատա դուխը գին։

ԱՍՏՍՈ ԳՈՅՈՒԹՅՈՒՆԸ

Անցնելով աստծո գոյության հարցին, ես պետք է նկատեմ, որ դա մեծ և լուրջ հարց է, և եթե ես մտադրովեի այն վերլուծել ըստ հնարավորին գոնե հարկ եղած չափով, այդ դեպքում ես ստիպված պիտի լինեի ձեզ այստեղ պահել մինչև երկրորդ գալուստը. այնպես, որ դուք պիտի ներեք ինձ, եթե ես շոշափեմ այդ հարցը միոքանչեն ընդհանուր ձեռվէ իհարկե, ինչպես ձեզ հայտնի է, կաթոլիկ եկեղեցին որպես դոգմա սահմանել է, որ աստծո գոյությունը կարելի է ապացուցել միայն բանականությամբ, առանց հայտնության։ Դա մի քիչ տարօրինակ դոգմա է, բայց և այնպես դա եկեղեցու դոգմաներից մեկն է։ Այդ դոգման մտցնելը կաթոլիկ եկեղեցուն հարկադրել է հետեւյալ հանգամանքը։ Մի ժամանակ ազատամիտները սովորություն էին դարձրել պընդելու, որ կարելի է մեջ բերել բազմաթիվ փաստարկներ, որոնց միջոցով միայն գիտակցությունն ի վիճակի է բացասել աստծո գոյությունը։ Հասկանալի է, որ կաթոլիկ եկեղեցու համար աստծո գոյությունը, ինքնըստինքյան հավատի խնդիր էր։ Ազատամիտներն սկսեցին մոլեռանդորեն մշակել այդպիսի փաստարկներ և հիմնավորում-

Ներ ու կաթոլիկ եկեղեցին զգաց, որ հարկավոր է վերջ տալ դրան. Հենց այդ պատճառով էլ նա սահմանեց, որ աստծո գոյությունը կարելի է ապացուցել միայն բանականությամբ, առանց հայտնության օգնության և նա ստիպված եղավ մշակելու այնպիսի փաստարկներ, որոնք, ինչպես ենթադրում էր նա, ապացուցում են աստծո գոյությունը: Այդ փաստարկները հասկանալի է, բավական շատ են, բայց ես կանգ կառնեմ մի քանիսի վրա միայն:

ՆԱԽԱՊԱՏՃԱՌԻ ՓԱՍՏԱՐԿԻ

Թերեւս ամենից հեշտ և պարզ կերպով կարելի է վերլուծել նախապատճառի փաստարկը: Քրիստոնեության կողմնակիցները պնդում են, որ այն բոլորը, ինչ մենք տեսնում ենք այս աշխարհում, ունի պատճառ. պատճառների շղթայով ավելի և ավելի խոր գնալով, դուք անպայման պիտի հանգեք նախապատճառին և հենց այդ նախապատճառի անունը դնում եք աստված: Մեր օրերում, ինչպես ինձ թվում է, նախապատճառի փաստարկը առանձնապես մեծ ժողովրդականություն շունի ամենից պոաջ այն պատճառով, որ ինքը պատճառ հասկացողությունը բոլորովին այն չէ, ինչ որ նա անցյալումն էր: Պատճառ հասկացողությունը ևնթարկվել է քիւիսոփաների և գիտության մարդկանց գրոհներին և այժմ շունի արդեն այն կենսունակությունը, որով նա

աշքի էր ընկնում անցյալում¹, սակայն անկախ դրանից դուք կարող եք համոզվել, որ այն փաստարկը, որի համաձայն պետք է գոյություն ունենա նախապատճառ, միանգամայն սնանկ է: Խոստովանում եմ, որ երբ ես դեռ երիտասարդ էի և շափազանց լուրջ կերպով գլուխ էի շարդում այդ հարցերի վրա, ես երկար ժամանակ ընդունում էի նախապատճառի փաստարկը, մինչեւ որ մի անգամ կարդացի (այդ ժամանակ ես 18 տարեկան էի) Զոն Ստյուարտ Միլլի «Ինքնակենսագրություն»-ը, որտեղ հանդիպեցի հետեւյալ հատվածին,— «Հայրս ինձ բացատրեց, որ «Ո՞վ է ստեղծել ինձ» հարցին չի կարելի պատասխանել, որովհետև դա անմիջապես կառաջացնի նոր հարց՝ «Իսկ ո՞վ է ստեղծել աստծուն»: Այդ

1 Ընդհակառակը, հարաբերականության, քվանտային մեխանիկայի և միջուկային էներգիայի տեսությունների ծագումը, գիտական հայտնագործություններ, որոնք տեղի են ունեցել ֆիզիկայի այդ բնագավառներում XIX և XX դարերի սահմանագծերում և ներկա դարի ընթացքում, օրինակ, ոչ միայն շխախտեցին պատճառ հասկացողության կենսունակությունը, այլև լայնացրին, խորացրին և հարստացրին այդ հասկացողությունը: Դիտերմինիզմի համար մղված պայքարը, էներգիտիզմի, օպերացիոնալիզմի և կոնվենցիոնալիզմի դեմ մղված պայքարի հետ միասին հանդիսանում է ժամանակակից ֆիզիկայում մատերիալիզմի համար, ընդում իդեալիզմի մղվող պայքարի հիմնական բնագավառներից մեջը: Պատճառականության սկզբունքի նվաստացումը ժամանակակից բնագիտության համար, կամա թե ակամա, հանդիսանում է իդեալիզմի քարոզ և ոչ մի շափով չի կառող ժառայել սկզբնապատճառի փաստարկի հերքմանը: Մասն, ուստի բարգմ. խմբ.:

արտասովոր պարզ հատվածն ինձ համոզեց, և մինչև
այժմ էլ նույն համոզմանն եմ, որ նախապատճառի
փաստարկը կեղծ է: Հիրավի, եթե ամեն ինչ պիտի ու-
նենա իր պատճառը, ապա աստված ևս պիտի ունենա
պատճառ: Իսկ եթե կարող է գոյություն ունենալ մի ինչ-
որ պատճառ շունեցող բան, ապա դրանով իսկ ինքը
բնությունը բնավ չի կարող ավելի վատ լինել, քան
աստված, այնպես որ սկզբնապատճառի փաստարկը
բացարձակապես անիրական է: Իր բնույթով սկզբնա-
պատճառի փաստարկը ոշնչով շի տարրերվում այն հըն-
դիկի հայացքից, որը կարծում էր, թե աշխարհը պահ-
վում է փղի վրա, իսկ փիղը՝ կրիայի վրա. իսկ երբ հըն-
դիկին հարցնում էին՝ «Իսկ ինչի՞ վրա է պահվում
կրիան», նա պատասխանում էր՝ «Եկեք խոսենք մի այլ
բանի մասին»: Եվ հիրավի, սկզբնապատճառի փաս-
տարկը բնավ ավելի լավ չէ, քան հնդիկի տված պա-
տասխանը: Զէ որ ոչ մի հիմք չկա ենթադրելու, որ աշ-
խարհը չէր կարող ծագել առանց պատճառի. մյուս կող-
մից. ոչ մի հիմք չկա ենթադրելու, որ աշխարհ չէր կա-
րող գոյություն ունենալ հավիտենապես: Ոչ մի
հիմք չկա ենթադրելու, որ ընդհանրապես աշխարհն ու-
նեցել է սկիզբ: Պատկերացումն այն մասին, որ իրեն
անպայման պետք է ունենան սկիզբ, իրականում մեր
աղքատիկ երեակայության արդյունքն է: Այդ պատճա-
ռով, թերեւս, կարիք չկա այլևս ժամանակ վատնել վեր-
լուծելու սկզբնապատճառի փաստարկը:

ԲՆԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՓԱՍՏԱՐԿՅՐ

Այնուհետև՝ շափազանց լայնորեն տարածված է բնական օրենքի փաստարկը։ Այդ փաստարկն առանձին ժողովրդականություն էր վայելում ամբողջ XVIII դարի ընթացքում, գլխավորապես հսահակ Նյուտոնի և Նրա կոսմոգոնիայի ազդեցությամբ։ Մարդիկ նկատեցին, որ մոլորակները արևի շուրջը պտտվում են ձգողականության օրենքին համապատասխան։ Եվ մարդիկ որոշեցին, որ դա կատարվում է այն պատճառով, որ աստված հրամայել է մոլորակներին շարժվել հենց այդ ձեռվ և ոչ այլ կերպ։ Հասկանալի է, որ դա վերին աստիճանի հարմար և պարզ բացատրություն էր, որը մարդկանց ազատում լրերևույթներին ավելի խոր նայելու հոգսերից, որպեսզի հասնեն ձգողականության օրենքի բացատրությանը։ Ներկայումս մենք ձգողականության օրենքը բացատրում ենք բավական բարդ եղանակով, որը մտցրել է էյնշտեյնը։ Ես մտադիր չեմ ձեզ համար դասախոսել ձգողականության օրենքի մասին, թե ինչպես էր այն մեկնարանում էյնշտեյնը, որովհետեւ դա ևս մեզնից շատ ժամանակ կիսեր։ Մեր նպատակների համար բավական է աւսել, որ մեր տրամադրության տակ այլևս չկա բնական օրենքի հասկացողությունն այն ձեռվ, ինչ ձեռվ նա գոյություն ուներ Նյուտոնի սիստեմում, որտեղ բնությունը, ինչ-որ անըմբունելի պատճառով, միշտ իրեն պահում էր միակերպ։ Այժմ մենք հայտնաբերում ենք, որ շատ

բաներ, որ մենք համարում էինք բնական օրենքներ, իրականում եղել են մարդկային պայմանականություններ։ Դուք գիտեք, որ աստղային տարածության ամենահեռավոր խորություններում երեք ոտնաշափը կազմում է մի յարդ։ Անկասկած, դա չափազանց ուշագրավ փաստ է, բայց հազիվ թե դուք այն անվանեք բնության օրենք։ Իսկ այդ նույն կատեգորիային է վերաբերում շատ բան, որ առաջ դիտվում էր որպես բնության օրենք։ Մյուս կողմից, այն դեպքերում, երբ ձեզ հաջողվում է որևէ գիտելիք ձեռք բերել այն մասին, թե իրականում ինչպես են պահում իրենց ատոմները, դուք հայտնաբերում եք, որ նրանք ավելի քիչ չափով են ենթակա օրենքին, քան պատկերացնում էին մարդիկ առաջ և որ այն օրենքները, որոնց դուք հանգում եք, հանդիսանում են հենց այն տիպի միջին վիճակագրականներ, որի հիմքում ընկած է դիպվածը։ Ձեզ բոլորիդ հայտնի է, որ զառերը գցելիս՝ մոտավորապես երեսունվեց դեպքից միայն մի դեպքում է դու շեշ (զույգ վեց) գալիս, և մենք այդ շենք դիտում որպես ապացույց այն բանի, որ զա-

1. Այստեղ և մի քիչ հետո Բ. Ռասսելը բնության օրենքների մեկնարանությունը տալիս է կոնվենցիոնալիզմի ոգով, դրանք անվանելով «պայմանականություններ» և դրանով իսկ բաղասելով դրանց օրիեկտիվ բնույթը։ Նա նշում է ժամանակակից ֆիզիկայի սահմանած որոշ օրինաշափությունների վիճակագրական բնույթը, բայց, ապօրինի կերպով չափականցնելով նրանց դերը, բնության օրենքների մեծ մասը վերագրում է օրինաշափությունների այդ տեսակին։ Սան. ուսւա. քարզմ. խմբ.։

ոերի ընկնելը կարդավորվում է ինչ-որ մեկի կամքով.
ճիշտ ընդհակառակը, եթե ամեն անգամ դու շեշ գար,
այն ժամանակ մենք կհամարեինք, որ մեկի կամքը կար-
դավորում է զառերի անկումը։ Այդ տիպին են պատկա-
նում բնության օրենքների մեծ մասը։ Դրանք հանդիսա-
նում են որպես միջին վիճակագրականներ այն տիպի, որը
եզրակացվում է դիպվածի հիման վրա, և տվյալ փաս-
տը բնական օրենքի այդ ամրող պատմությունը դարձ-
նում է շատ ավելի անհամոզիշ, քան այդ պատկերաց-
վում էր անցյալում։ Սակայն գիտության անցողիկ դրու-
թյունն արտահայտող տվյալ փաստից միանգամայն ան-
կախ, որը կարող է վաղը փոխվել, այն ամրող գաղա-
փարը, որ բնական օրենքներն ունեն իրենց օրենսդիրը,
իր ծագմամբ պարտական է բնական և մարդկային օ-
րենքների խառնաշփոթության։ Մարդկային օրենքները
ձեզ համար մի տեսակ կարգադրություններ են, որոնք
հրամայում են ձեզ հետևել որոշ վարքագծի, որը դուք
կարող եք ընտրել ձեզ համար, բայց կարող եք և մեր-
ժել. իսկ բնական օրենքները նկարագրում են այն, թե
ինչպես են իրերը պահում իրենց իրականության մեջ։
Եվ որովհետև դրանք պարզապես նկարագրում են, թե
ինչպես են իրերը պահում իրենց իրականում, դուք շեք
կարող պնդել, որ պիտի գոյություն ունենա ինչ-որ մեկը,
որը կարգադրում է նրանց պահել իրենց այդպես, քանի
որ այդ մատին ևնթաղրելն իսկ ձեր առաջ հարց է զնում՝
«Իսկ ինչո՞ւ աստված հատկապես այդ օրենքներն է հրա-

Հանգել, և ոչ թե այլ օրենքներ», Եթե դուք դրան պատասխանեք, որ նա այդ արել է պարզապես իր բարի կամքով և առանց որևէ պատճառի, ապա դուք կհայտնաբերեք, որ գոյություն ունի օրենքին շենթարկվող ինչ-որ բան, և այդպիսով, բնական օրենքի ձեր շղթան կկըտըրվի: Իսկ եթե դուք, ինչպես առավել ուղղափառ աստվածաբանները, պատասխանեք, որ աստված իր հրահանգելու հենց այդ օրենքներում պատճառներ ուներ հրահանգելու հենց այդ օրենքները, և ոչ ուրիշները (իհարկե, այդ պատճառն այն է, որ ստեղծի ամենալավ տիեզերք, թեև ձեր գլխում միտք անգամ չի ծագի, որ նա նման է ամենալավ տիեզերքի): Մի խոսքով, եթե այն օրենքները, որ հրահանգել է աստված, ունեցել են պատճառ, ապա այդ դեպքում աստված ինքը ենթակա էր օրենքին: Հետևապես, աստծուն որպես միշնորդ մեջ բերելով, դուք ոչինչ չեք շահի: Ըստ էության դուք կընդունեք օրենքն անկախ աստվածային սահմանումներից ու դրանից առաջ եղածից և աստծո գոյության ենթադրությունը կվրիպի նպատակից, որովհետև նա չի հանդիսանում վերջնական օրենսդիրը: Կարճ ասած, բնական օրենքին վերաբերող այս ողջ փաստարկը շունի այն ուժը, որը նա ուներ անցյալում: Իմ տեսության մեջ փաստարկները ըննարկվում են ժամանակի մեջ: Աստծո գոյությունն ապացուցելու համար օգտագործվող փաստարկները ժամանակի ընթացքում փոխում են իրենց բնույթը: Սկըզբնական շրջաններում դրանք անսասան ինտելեկտուալ

փաստարկներ էին, որոնք մարմնավորում էին հայտնի և
միւանգամայն որոշակի մոլորությունները: Իսկ երբ մենք
մոտենում ենք նոր ժամանակներին, ինտելեկտուալ տե-
սակետից դրանք դառնում են նվազ հարգելի և ավելի ու
ավելի են կրում յուրահատուկ բարոյախոսական անո-
րոշության կնիքը:

ՆՊԱՏԱԿԱԾԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱՐԿԸ

Նշված պրոցեսի հետևյալ աստիճանը մեզ կհասցնի
նպատակահարմարության փաստարկին: Զեզ բոլորիդ
հայտնի է, թե ինչ է նպատակահարմարության փաս-
տարկը. աշխարհում ամեն ինչ կառուցված է այնպես, որ
մենք կարողանանք այնտեղ ապրել, իսկ եթե աշխար-
հը գոնե մի քիչ այլ կերպ կառուցված լիներ, այն ժա-
մանակ մենք չէինք կարող այնտեղ ապրել: Հենց դրա-
նումն է նպատակահարմարության փաստարկը: Երբեմն
նա ընդունում է բավական տարօրինակ ձեեր. օրինակ՝
կարելի է լսել, որ ճագարներն սպիտակ պոշ ունեն նրա
համար, որ հեշտ լինի նշան բռնել նրանց վրա: Զգիտեմ
արդեն, թե ինչպես կգնահատեին այս աֆորիզմը իրենք
ճագարները: Նպատակահարմարության փաստարկը
հարմար թիրախ է ծաղր ու ծանակի համար: Զեզ բուռ-
րիդ հայտնի է Վոլտերի սրամտությունը՝ որ ըստ երե-
վութին, քիթը նախատեսված է նրա համար, որ ակ-
նոցները կարողանան մնալ նրա վրա: Ճիշտ է, հետագա-

լում պարզվեց, որ նման կատակներն այնքան էլ դիպուկ չեն, ինչպես այդ կարող էր թվալ XVIII դարում, քանի որ Դարվինից հետո մենք սկսեցինք ավելի լավ հասկանալ, թե ինչու կենդանի էակները հարմարեցված են իրենց շրջապատող միջավայրին։ Բանն այն չէ, որ միջավայրն ստեղծված լինի այնպես, որ համապատասխանի կենդանի էակներին. ընդհակառակը, իրենք՝ կենդանի էակներն այնպես փոխվեն, որ համապատասխանեն իրենց շրջապատող միջավայրին։ Բանն այն չէ, որ միջավայրը ստեղծած լինի այնպես, որ համապատասխանի կենդանի էակներին. ընդհակառակը, իրենք՝ կենդանի էակներն այնպես փոխվեն, որ համապատասխանեն իրենց շրջապատող միջավայրին և հենց այդ էլ հարմարվելու հիմքն է։ Դրանով ոչ մի նպատակահարմարություն չի ապացուցվում։

Երբ սկսում ես լրջորեն խորանալ նպատակահարմարության փաստարկի մեջ, ապա ուղղակի զարմանում ես, թե ինչպես կարող են մարդիկ հավատալ, որ իրը թե մեր աշխարհը, իր մեջ գտնված բոլոր իրերով, բոլոր արատներով, հանդիսանում է ամենալավը, որ կարող էր ստեղծել միայն ամենազորությունը և ամենահմացությունը միլիոնավոր տարիների ընթացքում։ Իսկապես ես շեմ կարող հավատալ դրան։ Մի՛ թե դուք կարծում եք, որ եթե ձեզ օժտեին ամենազորությամբ և ամենահմացությամբ և դրա վրա ավելացնեին միլիոնավոր տարիներ, որպեսզի կատարելագործեիք ձեզ ստեղծած աշ-

խարհը, ապա դուք չէիք կարող ստեղծել ավելի լավ բան, քան ստեղծել են կու-կլուկս-կլանը, ֆաշիստները կամ պարոն Ռիխնստոն Ներշիլը, Հիրավի, ինձ վրա մեծ տպավորություն շեն թողնում այն մարդիկ, որոնք հայտարարում են. «Նայեցեք ինձ, ես այնպիսի հոյակապ արարած եմ, որ տիեզերքում անպայման պիտի գոյություն ունենա նպատակահարմարություն»: Ինձ վրա առանձնապես մեծ տպավորություն չի թողնում այդ մարդկանց հոյակապությունը: Ահա թե ինչու ես ենթադրում եմ, որ նպատակահարմարության փաստարկը շատ ու շատ ողորմելի փաստարկ է: Ի դեպ, եթե դուք ընդունում եք գիտության սովորական օրենքները, ապա դուք պետք է ենթադրեք, որ մարդկային կյանքը և ընդհանրապես կյանքը մեր մոլորակի վրա վերջ ի վերջո կընդհատվի. Երկրային կյանքը ընդամենը մի բռնկում է միայն, դա արեգակնային համակարգության անկման մի աստիճանն է. անկման որոշ աստիճանում առաջանում են այնպիսի զերմաստիճանային և այլ պայմաններ, որոնք բարենպաստ են պրոտոպլազմայի համար և ամրող արեգակնային համակարգության կյանքում կարճ ժամանակով առաջանում է կենդանություն: Լուսինը, որն այժմ մեռած, սառը և անկենդան երկնային մարմին է, ձեզ ցույց է տալիս այն դրությունը դեպի որը շարժվում է երկիրը:

Ինձ առարկում են, որ դա ճնշող կարծիք է, իսկ երբեմն մարդիկ ավելացնում են, որ եթե նրանք համա-

Ճայնվեին նման կարծիքի հետ, ապա դրանից հետո կյանքը նրանց համար կդառնա անտանելի։ Զհավատագ դրան. դա կատարելագույն անհեթեթություն է։ Իրոք, ոչ ոք առանձնապես շի հուզվի նրա համար, ինչ որ կարող է պատահել միլիոնավոր տարիներ հետո։ Եթե նույնիսկ մի քանիսին թվում է, թե նրանք լրջորեն հուզվում են դրանից, ապա նրանք իրականում խարում են իրենք իրենց։ Մարդիկ հուզվում են ինչ-որ առավել երկրային բանի համար, կամ նրանք ուղղակի տառապում են ստամոքսի վատ մարսողությունից։ բայց իրականության մեջ ոչ ոք լուրջ կերպով շի հուսահատվի այնպիսի մի բանի մասին մտածելուց, որը մեր աշխարհին պիտի պատահի միլիոնավոր և միլիոնավոր տարիներ հետո։ Ահա թե ինչու, համաձայնվելով այն մտքի հետ, որ իսկապես կյանքն անխուսափելիորեն խորտակվելու ենթադրությունը մոայլ կարծիք է (ինձ գոնե թվում է, որ մենք իրավունք ունենք պնդելու այդ, թեև երբեմն, երբ սկսում եմ խորհրդածել այն մասին, թե մարդիկ ինչ! րեն գործածում իրենց կյանքի համար, այդ կարծիքը համարյա թե մխիթարում է ինձ), ես չեմ կարող միևնույն ժամանակ ընդունել, որ դա այնպիսի կարծիք է, որ կյանքը դարձնում է անտանելի։ Դա ուղղակի ձեզ դրդում է, որ ձեր ուշադրությունը դարձնեք այլ բաների վրա։

ԲԱՐՈՅՑԱԿԱՆ ՓԱՍՏԱՐԿՆԵՐ ԱՍՏԵՌ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՕԳՏԻՆ

Այժմ մենք դարձյալ մեկ աստիճան իշխենք այնտեղից, որ ես անվանում եմ ինտելեկտուալ վայրէջք (intellectual descend)¹, որն աստվածապաշտները խցկել են իրենց փաստարկումների մեջ, և հասնենք այն բանին, որ անվանում են աստծո գոյության օգտին բարոյական փաստարկներ։ Դուք բռլորդ, իհարկե զիտեք, որ հնում աստծո գոյության օգտին գործածական էր երեք ինտելեկտուալ փաստարկ, և որ դրանք բռլորը հերթված են իմմանուիլ Կանտի կողմից՝ նրա «Զուտ բանականության քննադատությունը» գրքում։ Բայց բավական էր հերքել այդ փաստարկները, երբ նա տեղնուտեղը հորինեց մի նոր՝ բարոյական կարգի փաստարկ և կատարելապես հավատում էր դրան։ Կանտը նման էր շատերին։ Ինտելեկտուալ հարցերում նա կասկածամիտ (սկեպտիկ) կերտվածքի տեր մարդ էր, բայց բարոյական հարցերում նա անվերապահորեն հավատում էր մոր կաթի հետ յուրացրած բռլոր հասկացողություններին։ Այս օրինակը լուսաբանում է պսիխոանալիտիկների կողմից համառորեն ընդգծված այն փաստը, որ մարդկանց մեջ ամենավաղ մանկությունից ծագած գաղափարական ասոցիացիաները մեզ վրա ավելի մեծ ազդեցու-

¹ Համեմատիր այս Բ. Ռասսելի սույն գրքույկի 20—21 էջերում ասածների հետո Սան. ուսւ. բարզմ. խմբ.։

թյուն են թողնում, քան ավելի ուշ տարիներին ծագած գաղափարական ասոցիացիաները:

Ուրեմն, ինչպես արդեն ասացի, աստծո գոյության օգտին Կանտը հորինեց մի նոր բարոյական փաստարկ և այդ փաստարկը տարբեր ձևերով արտասովոր հեղինակություն էր վայելում ամբողջ XIX դարի ընթացքում: Այն ձևերը, որ ընդունում է բարոյական փաստարկը, շափազանց բազմազան են: Դրանցից մեկն այն պնդումն է, որ եթե աստված գոյություն չունենար, ապա չէր լինի ո՛չ բարին, ո՛չ շարը: Տվյալ պահին ինձ չի հետաքրքրում, թե ընդհանրապես տարբերություն կա՞ շարի և բարու միջև, թե այդպիսի տարբերություն չկա: դա այլ հարց է: Ինձ հետաքրքրում է հետևյալը. եթե դուք միանկամայն համոզված եք, որ բարու և շարի միջև կա տարբերություն, ապա դուք կկանգնեք նոր պրոբլեմի առաջ. այդ տարբերությունն իր գոյությամբ պարտակա՞ն է արդյոք աստվածային սահմանմանը, թե ոչ: Եթե դա իր գոյությամբ պարտական է աստվածային սահմանումին, այդ դեպքում հենց իրեն աստծու համար բարու և շարի միջև տարբերություն չկա և հետևապես այն պնդումը, թե աստված բարի է, կորցնում է իր իմաստը, իսկ եթե դուք հակված եք պնդելու, ինչպես պնդում են աստվածաբանները, որ աստված բարի է, այդ դեպքում դուք պիտի ընդունեք, որ շարն ու բարին ունեն ինչ-որ նշանակություն, որը կախված է աստվածային սահմանումից, որովհետև աստվածային սահմանումները բարի են

ևոլթե շար, անկախ այն հանգամանքից, որ նրանք
բիում են աստծուց: Բայց եթե դուք տրամադիր եք ըն-
դունելու այդ, ապա դուք ստիպված պիտի լինեք ընդու-
նելու և այն, որ բարին և շարն իրենց ծագմամբ միայն
աստծուն չեն պարտական և որ դրանք իրենց էությամբ
տրամաբանորեն նախորդում են աստծուն: Ինքնին հաս-
կանալի է, որ դուք կարող եք, եթե ցանկանում եք, հայ-
տարարել, որ գոյություն ուներ գերազույն աստվածու-
թյուն, որը հրամաններ էր տալիս այս աշխարհն ստեղ-
ծող աստծուն. Կամ թե չէ, դուք կարող եք ընդունել այն
հայացքը, որին կողմնակից կին որոշ գնոստիկներ,—
հայացք, որն ինձ հաճախ թվացել է համոզիլ, որ մեզ
հայտնի աշխարհն իրականում ստեղծել է դեռ, երբ
աստված քնած էր: Այդ հայացքի օգտին կարելի է բերել
ոչ քիչ ապացույցներ, և իմ գործը չէ հերքել դրանք:

ԱՍԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՎԵԼՈՒ ՓԱՍՏԱՐԿԸ

Բարոյական փաստարկն ընդունում է նաև այլ՝ շա-
փազանց հետաքրքիր ձեւ, որը հանգում է հետեւյալին.
քրիստոնեության կողմնակիցները պնդում են, որ աստ-
ծո գոյությունն անհրաժեշտ է աշխարհում արդարություն
հաստատելու համար: Տիեզերքի մեզ հայտնի մասում
թագավորում է մեծ անարդարություն: Հաճախ արդարա-
միտ մարդիկ տառապում են, իսկ արատավորները ապա-
շադիմում են և զգիտես, թե որի համար ավելի մորմոք-
վես: Բայց եթե դուք ցանկանում եք, որ ամբողջ տիե-

զերքում հաղթանակի արդարությունը, ապա պիտի ենթադրեք, որ գոյություն ունի անդրշիրիմյան կյանք, որտեղ կվերականգնվի այստեղ՝ երկրի վրա ապրած կյանքի հավասարակշռությունը։ Այսպիսով, քրիստոնեության կողմնակիցները հայտարարում են, որ պետք է գոյություն ունենա աստված և պետք է գոյություն ունենա դրախտ և դժոխք, որպեսզի վերջին հաշվով արդարությունը կարողանա հաղթանակել։ Դա շափազանց հետաքրքիր փաստարկ է, եթե գործին նայենք գիտական տեսակետից, ապա պետք է ասել. «Վերջ ի վերջո ես ճանաշում եմ միայն այս աշխարհը. մնացած տիեզերքի մասին ես ուշինչ չգիտեմ, բայց, քանի որ ընդհանրապես կարելի է դատել ըստ հավանականության, պետք է եզրակացնել, որ հավանաբար այս աշխարհը մի սքանչելի նմուշ է, և եթե այստեղ թագավորում է անարդարությունը, ապա, ամենայն հավանականությամբ, անարդարությունը թագավորում է նաև ամենուրեք»։ Պատկերացրեք, որ դուք ստացել եք մի կողով նարինջ, բայց եք արել և հայտնարերել, որ նարինջի ամբողջ վերին շերտը փտած է, երաշխավորում եմ, որ դուք շեք դատի այսպես. «Տակի նարինջները պետք է լավը լինեն, որպեսզի վերականգնի հավասարակշռությունը»։ Ո՞շ, դուք կորոշեք. «Հավանաբար ամբողջ կողովը բանի պետք չի»։ Իրականում, հենց այդպես էլ կլինի տիեզերքի մասին գիտականորեն մտածող մարդու դատողությունների ընթացքը. նա կվճոի. «Այստեղ, այս աշխարհում, մենք

Հայտաբերում ենք շատ անարդարություններ և այդ հիմք է տալիս մեզ ենթադրելու, որ արդարությունը չէ, որ ղեկավարում է աշխարհը. հետևապես տվյալ փաստը ծառայում է որպես բարոյական փաստարկ աստվածության գոյության դեմ և ոչ թե նրա գոյության օգտինաւ ես, իհարկե, գիտեմ, որ իրականում քրիստոնեությունն ընդունելու համար բնավ էլ մարդկանց շեն դրդում այն ինտելեկտուայ փաստարկները, որոնց մասին ես զրուցում էի ձեզ հետո: Այն պատճառները, որոնք իրականում դրդում են մարդկանց հավատալու աստծուն, ընդհանրապես ոչ մի ընդհանուր բան չունեն ինտելեկտուալ փաստարկների հետո: Մարդկանց մեծամասնությունը հավատում է աստծուն պարզապես այն պատճառով, որ այդ հավատը նրանց մեջ մտցրել են մանկական տարիներից, և այդ է գլխավոր պատճառը:

Մյուս զորեղագույն պատճառը, իմ կարծիքով, պահապան-հրեշտակ ունենալու ցանկությունն է, մի յուրահատուկ ցանկություն այն մասին, որ դու ունենաս մի ավագ եղբայր, որը հոգ տանի քո մասին: Այս զգացմունքը շափազանց մեծ դեր է խաղում և ազդում է մարդկանց աստծուն հավատալու ձգտումների վրա:

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Այժմ ես ուզում եմ մի քանի խոսք ասել այն թեմայի մասին, որին, ինչպես ինձ թվում է, ոչ բավարար ու-

շադրության են նվիրում ռացիոնալիստները, այսինքն՝ այն հարցին, թե Քրիստոսը եղե՞լ է արդյոք մարդկանցից լավագույնը և ամենաիմաստունը։ Սովորաբար ինքնին հասկանալի է համարվում, որ այդ հարցում մենք բոլորս պիտի համաձայն լինենք, որ, այո՛, եղել է Բայրը ես մտածում եմ այլ կերպ։ Ես ենթադրում եմ, որ կզանվեն շատ և շատ կետեր, որոնց նկատմամբ ես համաձայն եմ Քրիստոսի հետ շատ ավելի, քան Քրիստոնեությունը դավանող մարդիկ։ Չեմ կարծում, որ ես կկարողանայի Քրիստոսին հետևել մինչև վերջ, բայց ես կարող էի գնալ նրա հետեւց շատ ավելի հեռու, քան այդ կարող է անել քրիստոնեություն դավանողների մեծամասնությունը։ Դուք հիշում եք, որ նա ասել է.«...շարին մի՛ հակառակիր. բայց ով ապտակի քո աջ այտին, դեպի նա շրջիր նաև մյուսը...»։ Քրիստոսի խոսքերը որևէ նոր պատվիրան կամ նոր սկզբունք չէին արտահայտում։ Լառ Ցզին և Բուդդան այդ սկզբունքը գործադրուած էին Քրիստոսից 500—600 տարի առաջ, բայց մի՞թե քրիստոնյաները գործնականում ընդունում են այս սկզբունքը։ Ես բնավ շեմ կասկածում, օրինակ. որ այժմյան պրեմիեր-մինիստրը¹ ամենաանկեղծ քրիստոնյան է, և, այնուամենայնիվ, ես ձեղանից ոչ ոքի խորհուրդ չէի տա գնալ և խփել նրա մի այտին։ Ես հավատացած եմ, որ դուք կհամոզվեիք, որ նրա կարծիքով

¹ Ստենլի Բոլդուինը։

Քրիստոսն այդ խոսքերին տվել է փոխարերական իւմասու

Կա նաև մի այլ կետ, որն իմ կարծիքով ուղղակի հիանալի է: Դուք հիշում եք, որ Քրիստոսն ասել է. «Մի դատիք, և չեք դատվի», իսկ քրիստոնեական երկրների դատարաններում ժողովրդականություն վայելում էր արդյոք այդ սկզբունքը: Զեմ կարծում, որ ձեզ հաջողվի հայտնաբերել այդպիսի բան: Անձամբ ես իր ժամանակին ճանաշում էի շատ դատավորների, որոնք ամենաշերմեռանդ քրիստոնյաներ էին, բայց նրանցից ոչ մեկի գլխով անդամ չէր անցնում, որ այն, ինչ նրանք անում էին, դրանով իսկ վարվում էին քրիստոնեական սկզբունքներին հակառակ: Եվ ասա՞ Քրիստոսն ասում է. «Քեզնից խնդրողին տուր, և փոխարինաբար ուզողից երես մի դարձնի», Դա շատ լավ սկզբունք է:

Չեր նախագահն զգուշացրեց ձեզ, որ մենք այստեղ լենք հավաքվել քաղաքական հարցերի քնարկմամբ գրադպիկու համար: Բայց և այնպես, ես հնարավոր շեմ համարում զսպել ինձ և շնկատել, որ վերջին ընդհանուր ընտրությունների ժամանակ պայքարը բորբոքվեց հենց այն մասին, թե որքան ցանկալի կլիներ երես շուր տալ քեզնից փոխարինաբար խնդրողից: Ակամայից սկսում ես մտածել, որ մեր երկրում լիբերալների և պահպանուականների պարտիաները բաղկացած են անպիսի մարդկանցից, որոնք համաձայն շեն Քրիստոսի ուսմուն-

թի հետ, որովհետև նրանք այս դեպքում, անկասկած, ամենավճռական կերպով երեսները շուր տվին:

Ես կարող եմ վկայակոչել Քրիստոսի մի պատվիրան ևս, որն, ըստ իս, արժանի է ամենայն հավանության, բայց ես, ինչ-որ շեմ տեսնում, թե նա առանձին սեր վայելեր մեր քրիստոնյա բարեկամների շրջանում։ Քրիստոսն ասել է. «... եթե ցանկանում ես կատարյալ լինել, գնա վաճառիր ունեցվածքդ և բաժանիր աղքատներին...»։ Դա սքանչելագույն պատվիրան է, բայց, ինչպես արդեն ասացի, կյանքում դրան շատ էլ չեն հետեւում։

Այս բոլորը, իմ կարծիքով, սքանչելի պատվիրաններ են, թեև մի քիչ դժվար է այդ պատվիրանների համաձայն ապրելը։ Ես շեմ ուզում ասել, որ ինքս ապրում եմ այդ պատվիրանների համաձայն։ և վերջապես ես այդպիսի նպատակ շեմ դնում իմ առաջ, և բացի այդ, ինձնից այլ բան է պահանջվում, քան քրիստոնյայից։

ՔՐԻՍՏՈՍԻ ՈՒՍՄՈՒՆՔԻ ԱՐԱՏՆԵՐԸ

Պատշաճը հատուցելով այդ սքանչելի պատվիրաններին, ես անցնում եմ որոշ հարցերի, որոնց մեջ, իմ կարծիքով, չի կարելի դիտել ոչ Քրիստոսի բարձրագույն իմաստությունը, ոչ նրա մեծագույն ողորմածությունը, որոնք վերագրվում են նրան ավետարաններում։ Այս կապակցությամբ ես կարող եմ նկատել, որ մենք զբաղ-

ված շենք պատմական պրոբլեմով։ Պատմականորեն ընդհանրապես շափազանց կասկածելի է, թե երբեմունք գոյություն ունեցե՞լ է արդյոք Քրիստոսը, իսկ եթե նա գոյություն ունեցել է, ապա մենք նրա մասին ոշինչ շղիտենք։ Այսպիսով, այժմ ես շեմ զբաղվում պատմական պրոբլեմով, որը արտակարգ դժվար պրոբլեմ է։ Ես զբաղված եմ այն Քրիստոսով, որը պատկերված է ավետարաններում, ընդունելով ավետարանական զրուցն այնպես, ինչպես ող նա կա. և այստեղ մենք գտնում ենք մի շարք բաներ, որոնք բնավ շեն վկայում Քրիստոսի հատուկ իմաստության մասին։ Կակսեմ նրանից, որ Քրիստոսն անկասկած գտնում էր, թե իր երկրորդ գալուստը երկնային փառքով տեղի կունենա նախքան իր ժամանակ ապրող բոլոր մարդկանց մահանալը։ Այդ ապացուցում են ավետարանական բնագրերի շատ տեղերը։ Օրինակ, Քրիստոսն ասում է. «... Խրայելյան քաղաքները դեռ շրջած շեք լինի, երբ կգա Որդին Մարդու»։ Եվ նա էլի ասում է. «... այստեղ կանգնածների մեջ կան որոշ մարդիկ, որոնք մահը շճաշակած Մարդու Որդուն կտեսնեն Յուր ապագա Արքայության մեջ»։ Կան շատ այլ տեղեր ևս, որից պարզ երևում է, որ Քրիստոսը հավատում էր, թե իր ժամանակակից շատ մարդկանք օրոք։ Այդ հավատը բաժանում էին նաև Քրիստոսի վաղ հետեւը որդները, և դա կազմում էր նրա բարոյական ուամունքի շատ տարրերի հիմունքը։ Երբ Քրիստոսն ասում էր՝

«Այսպես ուրեմն, մի հոգացեք վաղվա մասին» և նման
այլ բաներ, շատ մեծ շափով նրան մղում էր այն հա-
մոզմունքը, որ երկրորդ գալուստը տեղի կունենա շատ
շուտով և որ բոլոր սովորական աշխարհային գործերը
ոչ մի գրոշ շարժեն: Ես ճանաշում էի մի քանի քրիս-
տոնյաների, որոնք հավատում էին, որ երկրորդ գա-
լուստը մոտ է: Այսպես, ես ճանաշում էի մի ծխական
քահանայի, որը մահու շափ վախեցրել էր իր հոտին, ա-
սելով, որ այսօր-վաղը անպատճառ վրա կհասնի երկ-
րորդ գալուստը. Ճիշտ է նրա ծխականները լիովին մխի-
թարվեցին, երբ տեսան, որ նա իր այգում ծառեր է տըն-
կում: Խայց վաղ քրիստոնյաները իրոք հավատում էին
դրան, և իրենց հեռու էին պահում այնպիսի բաներից,
ինչպիսին է իրենց այգիներում ծառեր տնկելը, որով-
հետև նրանք իսկապես հավատացել էին Քրիստոսին, որ
շուտով վրա կհասնի նրա երկրորդ գալուստը: Պարզ է,
որ այս առնշությամբ Քրիստոսն այնքան էլ իմաստուն
չէր, որքան մի քանի այլ մարդիկ, իսկ նրա գերագույն
իմաստության մասին արդեն խոսելու կարիք էլ չկա:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊՐՈԹԼԵՄԸ

Քրիստոսի անձնավորության հարցը հարկավոր է
քննարկել նաև բարոյական տեսանկյունով: Քրիստոսի
բարոյական կերպարում կա, բայտ իս, մի շափազանց
լուրջ արաւու, և դա այն է, որ Քրիստոսը հավատում էր

դժոխիքին։ Ես չեմ կարող ինձ պատկերացնել, որ իոր մարդկայնությամբ աշքի ընկնող մի մարդ իրոք կարող է հավատալ հավիտենական պատժին։ Իսկ Քրիստոսը, ինչպես որ նա պատկերված է ավետարաններում, անկասկած, հավատում էր հավերժական պատժին և մենք շատ տեղեր կգտնենք, որտեղ նա վրեժխնդիր շարությամբ է լցված այն մարդկանց դեմ, որոնք չէին ուզում լսել նրա քարոզները, մի վերաբերմունք դեպի այլախոհները, որն ամենային էլ անսովոր չէ քարոզիչների համար, բայց որը որոշ շափով նվաստացնում է Քրիստոսի նման անձնավորության վեհությունը։ Դուք, օրինակ, դեպի այլախոհները նման վերաբերմունք չեք հանդիպի Սոկրատեսի մոտ։ Սոկրատեսը իրեն լսել շցանկացողներին վերաբերվում էր բարեսրտորեն և ներողամտորեն և այդպիսի վերաբերմունքը, ինձ թվում է, շատ ավելի արժանավայել է իմաստունի համար, քան զայրույթը։ Դուք բոլորդ երկի հիշում եք, թե ինչ է ասել Սոկրատեսն իր մահից առաջ և ինչ էր նա միշտ ասում այն մարդկանց, որոնք տարակարծիք էին իրեն։

Իսկ ավետարաններում դուք կգտնեք, որ Քրիստոսն ասել է. «Օձե՛ր, իժի ծնունդնե՛ր, ինչպես պիտի խուսափեք գեհնն դատապարտվելուց»։ Այս խոսքերն ուղղված են այն մարդկանց, որոնք չէին զմայլվում նրա քարոզներով։ Իմ կարծիքով, սա ոչ մի կերպ չի կարելի համարել լավագույն վարվելակերպ, իսկ ավետարաններում շափազանց շատ այսպիսի տեղեր կան դժոխիքի մասին։

Եվ ամենից առաջ, իհարկե, սուրբ Հոգու դեմ մեղանշելու վերաբերյալ հայտնի տեղը. ոիսկ եթե որևէ մեկը մի քան ասի Սուրբ Հոգու մասին, այդ շի ներվի նրան ո՞չ այս դարում, ո՞չ ապագայում: Այս տեղը աշխարհին պատճառել է անհաշիվ տառապանքներ, որովհետև ամեն դիրքի և վիճակի տեր մարդիկ իրենց գլուխները մտցընում էին, թե հանցանք են կատարել սուրբ Հոգու դեմ, որը շի ներվի նրանց ո՞չ այս դարում, ո՞չ էլ ապագայում: Հիրավի, ես բնավ չեմ կարծում, որ բնությունից որևէ շափով բարությամբ օժտված մարդը կարող է մեր աշխարհում ցանել նման սարսափներ և ահուղող:

Այնուհետև Քրիստոսն ասում է. «Որդին Մարդու իր հրեշտակներին կուղարկի և իր թագավորությունից կհավաքեն բոլոր գայթակղություններն ու ապօրինի գործեր կատարողներին: Եվ նրանց կնետեն հրեղեն հնոցի մեջ. այնտեղ կլինի լաց ու կոծ և ատամների կրծոց»: և նա դեռ երկար շարունակում է խոսել լացի ու ատամների կրծոցի մասին: Այդ մասին խոսվում է ամեն մի տողում և ընթերցողի համար միանգամայն ակնհայտ է դառնում, որ Քրիստոսը լացն ու ատամների կրծոցը նախագուշակում է ոչ առանց որոշ բավականության, հակառակ դեպքում նա այդքան հաճախ չէր խոսի այդ մասին: Ապա դուք բոլորդ, իհարկե, հիշում եք այն տեղը, որտեղ խոսվում է ոչխարների և այծերի մասին և թե ինչպես է նա ուզում իր երկրորդ գալստյան ժամանակ ոշխարներին անջատել այծերից և այծերին

ասել. «... Հեռացե՛ք Ինձանից, անիծյալներ, գեպի հու-
րը հավիտենական...»: Իսկ հետո նա նորից ասում է.
«Եվ եթե քեզ գայթակղեցնում է ձեռքդ, կտրիր այն. ա-
վելի լավ է խեղված մտնել կյանք, քան երկու ձեռքով
գնալ գեհեն, անշեց կրակի մեջ, որտեղ նրանց որդը չի
մեռնում և հուրը չի հանգչում»: Այս թեման նույնպես
շատ անգամ է կրկնվում: Ես ստիպված եմ հայտարա-
րել, որ այդ ամբողջ դոկտրինան, թե իրը դժոխային հու-
րը պատիծ է մեղքերի համար, ես պատկերացնում եմ
որպես դաժանության դոկտրինա: Դա մի դոկտրինա է,
որը դաժանություն սերմանեց աշխարհում և մարդկային
ցեղի բազմաթիվ սերունդներին բերեց դաժան տան-
շանքներ. և եթե ընդունենք այն, ինչ պատմում են հենց
Քրիստոսի տարեգիրները, ապա ավետարանների Քրիս-
տոսը, անկասկած, պետք է մասամբ պատասխանատու
ճանաշվի դրա համար:

Ավետարաններում կան նաև նույն կարգի, ավելի
պակաս նշանակալի բաներ ևս: Վերցրեք գաղարացի-
ների խոզերի օրինակը. դուք, իհարկե, կհամաձայնվեք
ինձ հետ, որ Քրիստոսն այնքան էլ ողորմածաբար շվար-
վեղ խոզերի հետ, չար ոգիներ մտցնելով նրանց ներսը,
որի հետևանքով, հոտը զառիթափից թափվեց ծովը: Դուք
պետք է հիշեք, որ Քրիստոսն ամենակարող էր, և կա-
կարող էր հրամայել չար ոգիներին, որ կորչեն, հեռա-
նան բայց նա գերադասեց չար ոգիներին մտցնել խոզե-
րի մեջ: Եվ ահա մի տարօրինակ պատմություն ևս թզե-

նու մասին, որն ամեն անգամ ինձ միանգամայն շփոթեցնում էր: Դուք հիշում եք, թե ինչ պատահեց թղենու հետ. «Նա քաղց զգաց: Եվ հեռվից տեսնելով տերեներով ծածկված թղենին, գնաց մոտը, որ մի բան զտնի վրան, բայց մոտենելով ծառին, տերևներից բաղի ոչինչ չգտավ, որովհետև դեռ թուզը հավաքելու ժամանակը չէր: Եվ Հիսուսը ծառին ասաց. թող այսուհետև մինչ հավիտյան ոչ ոք շճաշակի քո պտուզը: Եվ Պետրոսն ասում է նրան. «Ռարրի, տե՛ս, քո անիծած թուզը շորացավ»: Սա իրոք շափականց տարօրինակ պատմություն է, որովհետև դեպքը տեղի է ունեցել տարվա այնպիսի ժամանակ, երբ թուզը դեռ հասած չի լինում և ծառը բոլորովին անմեղ էր: Մի խոսքով, ես վճռականապես հրաժարվում եմ բնդունել, որ իմաստության և առաջինության հարցերում Քրիստոսը գրավում է այնպիսի բարձր տեղ, ինչպես պատմությունից մեզ հայտնի մի բանի այլ մարդիկ: Ինձ թվում է, որ առանձնապես ես, այդ երկու դեպքում էլ Բուդդային և Սոկրատեսից Քրիստոսից վեր կդասեի:

ԷՄՈՑԻՈՆԱԼ ԳՈՐԾՈՒՅ

Ինչպես արդեն նշել եմ, մարդկանց կողմից կրոնն ընդունելու իսկական պատճառը, իմ կարծիքով, ոչ մի ընդհանուր բան չունի դատողության փաստարկների հետ: Մարդիկ կրոնն ընդունում են ելնելով էմոցիոնալ մղումներից: Հաճախ մեզ հավատացնում են, որ կրոնի վրա հարձակվելը շափականց կորստաթեր է, որովհետեւ

կրոնը մարդկանց դարձնում է առաքինի: Ինձ էլ են հավատացրել այդ բանում, բայց ես ինչ-որ շեմ նկատել, որ իրոք դա այդպես է: Անկասկած, ձեզ բոլորիդ հայտնի է, թե Սեմյուել Բատլերը ինչպես է ծաղրում այդ փաստարկը իր «Վերադարձ դեպի Երեվոն»¹ գրքում: Դուք հիշում եք, որ «Երեվոն»-ում նկարագրված է ինչ-որ Հիգգս, որն րնկնում է մի հեռու երկիր, որոշ ժամանակ անց է կացնում այստեղ, իսկ հետո օդապարիկով փախչում է այդ երկրից: Քսան տարի հետո Հիգգսը վերադառնում է նույն երկիրը և տեսնում, որ էրեվոնցիները նոր կրոն են դավանում, որտեղ երկրպագության առարկան մեկ ուրիշը չէ, այլ հենց ինքը՝ Հիգգսն է, որին տվել են «Արևի Որդի» անունը և նրա մասին պատմում են, որ նա համարածել է երկինք: Հիգգսը ժամանում է հենց համբարձման տոնի առթիվ կազմակերպված հանդեսների նախօրյակին: Նա ծածուկ լսում է պրոֆեսորներ Հենկի և Պենկի խոսակցությունը, որոնք պատմում էին միմյանց, որ նրանք երբեք Հիգգս անունով մարդու երեսն անգամ չեն տեսել, և հույս ունեն, որ երբեք չեն տեսնի. բայց հենց իրենք են հանդիսանում «Արևի որդի» կրոնի քահանայապետերը: Հիգգսը խիստ զայրանում է, մոտենում է նրանց ու հայտարարում. «Իսկ ես կմեր-

¹ Սեմյուել Բատլերը (1835—1902) անգլիական գրող է, որն իր «Երեվոն» և «Վերադարձ դեպի Երեվոն» երգիծական վեպերում ծաղրել է բուրժուական հասարակությունը, նրա կրոնը, փիլիսոփայությունը և բարոյախոսությունը: Մաս. ուսու. բարգմ.:

կացնեմ այս ամբողջ շառլատանությունը և էրեվոնի բնակիչներին կպատմեմ, որ Արևի Որդին այդ ես եմ միայն, մարդ Հիգգուր, և որ այդ ես եմ թուել օդապարհ-կովս։ Բայց Հենկին և Պենկին պատասխանում են նրան. ռԴուք այդ շպետք է անեք, որովհետև այս երկրի ամբողջ բարոյականությունը պահպում է Արևի Որդու առասպելի վրա և եթե էրեվոնցիներն իմանան միայն, որ դուք երկինք չեք համբարձել, նրանք բոլորը արատ-ների մեջ կթաղվեն։ Այդ պատճառարանությունը համոզում է Հիգգուրին և նա խաղաղված հեռանում է այդ երկ-րից։

Հենց այդ գաղափարն են ներշնչում մեզ քրիստոնեության կողմնակիցները՝ որ իրր թե մենք բոլորս արատ-ների մեջ թաղված կլինեինք, եթե չհետևեինք քրիստո-նեական կրոնին։ Իսկ ես կարծում եմ, որ հենց այն մարդիկ, որոնք հետևել են քրիստոնեական կրոնին, հենց նրանց մեծ մասն է աշքի ընկել աղաղակող արա-տավորությամբ։ Դուք կընդունեք, անշուշտ, այն հե-տաքրքիր փաստը, որ պատմության այս կամ այն ժա-մանակաշրջանում որքան ուժեղ և խորն են եղել կրո-նական զգացմունքներն ու դոգմատիկ հավատալիքնե-րը, այնքան ավելի է այդ շրջանն աշքի ընկել իր դաժա-նությամբ և այնքան ավելի վատ է եղել իրերի դրությու-նը։ Այսպես կոշված հավատի դարերում, երբ մարդիկ իրոք քիրստոնեական կրոնին հավատում էին լրիվ շա-փով, գոյություն ուներ ինկվիզիցիան իր տանջանքնե-40

բով. միլիոնավոր դժբախտ կանայք խարույկների վրա այրվել են որպես կախարդուհիներ. և չկար մի որևէ տեսակի դաժանություն, որ հանուն կրոնի գործի շղրվեր հասարակության բոլոր խավերի դեմ:

Նայեցեք ձեր շուրջը գտնվող աշխարհին և դուք կտեսնեք, որ մարդկային զգացողությունների պրոգրեսի յուրաքանչյուր մասնիկը, քրեական օրենսդրության յուրաքանչյուր բարելավումը, աշխարհում պատերազմները պակասեցնելուն ուղղված յուրաքանչյուր քայլը, դեպի գունավոր ցեղերը ունեցած վերաբերմունքը բարելավելու համար արված յուրաքանչյուր քայլը կամ ստրկության որևէ մեղմացում, աշխարհում տեղի ունեցող ամեն տեսակի բարոյական պրոցես—այս բոլորն անխտիր հանդիպել է աշխարհի՝ կազմակերպված եկեղեցիների դիմադրությանը: Եվ ես իմ խոսքերի համար ամբողջ պատասխանատվությամբ հայտարարում եմ, որ քրիստոնեական կրոնն այն ձեռվ, ինչ ձեռվ, որ նա կազմակերպված է իր եկեղեցիներում, եղել է և դեռ շարունակում է մնալ բարոյական պրոգրեսի գլխավոր թշնամին աշխարհում:

ԻՆՉՊԵՍ ԷՒՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԿԱՍԵՑՆՈՒՄ ՊՐՈԳՐԵՍԸ

Դուք կարող եք կարծել, որ ես շափից անցա, երբ հայտարարեցի, որ քրիստոնեական կրոնը դեռևս շարունակում է մնալ պրոգրեսի գլխավոր թշնամին: Իսկ

ես կարծում եմ, որ միանգամայն իրավացի եմ: Վերցրեք մի այսպիսի փաստ: Խնդրում եմ ներեք ինձ, որ ես հիշատակում եմ այդ մասին: Դա հաճելի փաստերից չէ, բայց եկեղեցիներն ստիպում են մեզ հիշատակել հաճելի կարգին շպատակնող փաստերը: Պատկերացնենք, որ այն աշխարհում, որտեղ մենք ապրում ենք այժմ, անփորձ աղջիկը ամուսնական կապերով իրեն կապում է մի սիֆիլիտիկի հետ. Նման դեպքում կաթոլիկ եկեղեցին հայտարարում է. «Դա՝ անքակտելի խորհուրդ է: Մինչև ձեր կյանքի վերջին օրը դուք պարտավոր եք մնալ միասին», և այդ կինն իրավունք շռնի որևէ քայլ անել սիֆիլիտիկ երեխաների աշխարհ գալը կանխելու համար: Ահա, թե ինչ է հայտարարում կաթոլիկ եկեղեցին: Իսկ ես ասում եմ, որ դա դիվային դաժանություն է. և ոչ մի մարդ, որի բնական համակրանքները չեն այլասերվել դոգմայից կամ բարոյական խառնըվածքը բոլորովին չի մեռել ամեն տեսակի կարեկցական գգացմունքների համար, չի կարող պնդել, որ իրերի նման դրության շարունակվելը ճիշտ է և արդարացի:

Ասածս ոչ այլ ինչ է, քան մի օրինակ միայն: Կան լափաղանց շատ ուղիներ, որոնց օգնությամբ եկեղեցին պնդելով այն, ինչ նրան ձեռնտու է անվանել բարոյականություն, մեր ժամանակներում մարդկանց պատճառում է զանազան անարդարացի և անտեղի տառապանքներ: Եվ ինչպես, իհարկե, հայտնի է ձեզ, եկեղեցին հանձինս իր ներկայացուցիչների մեծ մասի դեռևս

շարունակում է մնալ պրոգրեսի և այն ամենի բարելավման հակառակորդ, ինչ աշխարհում մեզ տանում է դեպի տառապանքների նվազումը, որովհետև նրան ձեռնտու է բարոյականության պիտակ փակցնել վարքի կանոնների մի որոշակի նեղ կողեքսի վրա, որը մարդկային երջան կության հետ ոչ մի առնչություն չունի: Իսկ երբ դուք հայտարարում եք, որ պետք է անել այս կամ այն բանը, որովհետև ձեր արածը կնպաստի մարդկային երջան կությանը, եկեղեցականները կարծում են, որ դա ընդհանրապես գործին չի վերաբերում: «Ի՞նչ կապ ունի մարդկային երջաններությունը բարոյականության հետ: Չէ» որ բարոյականության նպատակը բոլորովին էլ մարդկանց երջանիկ դարձնելը չէ: Բարոյականության նպատակն է մարդկանց պիտանի դարձնել երկնքի համար: Եվ պետք է ենթադրել՝ անպետք այս աշխարհի համար:

ԿՐՈՆԻ ՀԻՄՔԸ ԵՐԿՅՈՒՂՆ Է

Իմ կարծիքով կրոնը ամենից առաջ և գլխավորապես հիմնված է երկյուղի վրա: Մասսամբ դա անհայտի հանդեպ ունեցած սարսափին է, իսկ մասամբ, ինչպես ես արդեն նշել եմ, դա այն ցանկությունն է, երբ զգում ես, որ դու ունես յուրահատուկ ավագ եղբայր, որը բոլոր դժբախտությունների և փորձանքների ժամանակ քեզ կպաշտպանի: Երկյուղ— ահա թե ինչ է ընկած այս ամ-

բողջ երկույթի հիմքում, երկյուղ՝ խորհրդավորության հանդեպ, երկյուղ՝ անհաջողությունների հանդեպ, երկյուղ՝ մահվան հանդեպ։ Իսկ որովհետև երկյուղը դաժանության նախահայրն է, ապա զարմանալի շէ, որ դաժանությունն ու կրոնը ձեռք-ձեռքի տված էին քայլում, որովհետև այդ երկուսի հիմքը նույնն է՝ երկյուղը։ Այս աշխարհում մենք այժմ սկսում ենք կամաց-կամաց հասկանալ երկույթները և կամաց-կամաց դրանք ենթարկել մեր կամքին գիտության միջոցով, որը քայլ առ քայլ ճանապարհ է բաց անում իր համար, հաղթահարելով քրիստոնեական կրոնի թշնամանքը, եկեղեցիների թշնամանքը և եկեղեցական բոլոր հնամաշ կանոնները։ Միայն գիտությունը կարող է օգնել մեզ հաղթահարելու այն փոքրոգի երկյուղը, որի իշխանության տակ էր գտնվում մարդկությունը այդքան շատ սերունդների կյանքի ընթացքում։ Գիտությունը, իսկ ես կարծում եմ, որ մեր սեփական սրտերը ևս, մեզ կարող են սովորեցնել, որ մենք դադարենք մեր շուրջը նայելով երկակայական պաշտպաններ փնտրելուց, դադարենք երկնքում մեզ համար դաշնակիցներ հնարելուց, որ ավելի լավ է հույսներս դնենք մեր սեփական ուժերի վրա այստեղ՝ երկրի վրա, որպեսզի այս աշխարհը դարձնենք կյանքի համար պիտանի և ոչ թե այնպիսի վայր, ինչպիսին դարձրել էին եկեղեցիները այս բոլոր դարերի ընթացքում։

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՆՔ ՄԵՆՔ

ՄԵՆՔ պետք է կանգնենք մեր սեփական ոտքերի վրա
և դեմ առ դեմ նայենք աշխարհին, թե ինչ լավ ու վատ,
գեղեցիկ ու այլանդակ բան կա այնտեղ. տեսնել աշ-
խարհն այնպես, ինչպես որ նա կա, և շվախենալ նրա-
նից: Նվաճել աշխարհը խելքով և ոչ թե ստրկական հնա-
զանդությամբ դեպի այն սարսափները, որ նա ծնում է:
Աստծու ամրողը կոնցեպցիան մի կոնցեպցիա է, որն
ընդօրինակված է արևելյան բռնակալություններից: Դա
մի կոնցեպցիա է, որը բոլորովին վայել չէ ազատ մարդ-
կանց: Երբ դուք լսում եք, թե մարդիկ եկեղեցում ինչ-
պես են ստորացնում իրենց և հայտարարում, որ իրենք
դժբախտ մեղավորներ են և շատ այլ բաններ, ապա դա
ստորացուցիչ է և իրենց հարգող մարդկային արարած-
ներին ոչ արժանավայել: Իսկ մենք պետք է կանգնենք
ուղիղ և բաց ճակատով նայենք աշխարհին: Մենք պետք
է աշխարհից վերցնենք այն բոլորը, ինչ որ նա կարող
է տալ, և եթե այդ ավելի քիչ լինի, քան մենք կուգենա-
յինք, այնուամենայնիվ մեզ կհասնի վերջ ի վերցու ավե-
լի շատ բաժին, քան հողողվել է ուրիշներին վերցնել աշ-
խարհից բոլոր անցած դարերի ընթացքում: Լավ աշ-
խարհին հարկավոր է գիտություն, բարեսրտություն և
աղիություն. նրան պետք չեն վշտալի ցավակցություն-
ներ անցյալի մասին կամ ազատ բանականության ստրր-
կական կաշկանդվածություն այնպիսի բառերով, որոնք

շատ վաղ անցյալում առօրյա գործածության մեջ էին մտցրել տգետ մարդիկ, և ավ աշխարհին հարկավոր են աներկյուղ հայացք և ազատ միտք, Նրան պետք է ապագայի հույս և ոչ թե անվերջ հետաղարձ հայացքներ դեպի անցյալը, որն արդեն մահացել է և որին, մենք համոզված ենք, շատ կգերազանցի այն ապագան, որ կստեղծվի մեր բանականությամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հրատարակության կողմից	3
Ի՞նչ է քրիստոնյան	10
Աստծո գոյությունը	13
Նախապատճառի փաստարկը	14
Բնական օրենքի փաստարկը	17
Նպատակահարմարության փաստարկը .	21
Քարոյական փաստարկներ աստծո գոյության օգտին	25
Անարդարությունը քավելու փաստարկը	27
Քրիստոսի անձնավորությունը .	29
Քրիստոսի ուսմունքի արատները	33
Քարոյական պրոբլեմը .	34
Էմոցիոնալ գործոնը	39
Խնչպես էին եկեղեցիները կասեցնում պրոգրեսը	41
Կրոնի հիմքը երկյուղն է	43
Ինչ պետք է անենք մենք	45

Թարգմանիչ՝ Պ. Թարվերդյան
 Խմբագիր՝ Ա. Մարտիկյան
 Նկարիչ՝ Ս. Զախիրյան
 Գեղ. խմբագիր՝ Օ. Ասատրյան
 Տեխ. խմբագիր՝ Է. Ավագյան
 Շերստուգող սրբագրիչ՝ Ռ. Սարգսյան



Գատվեր 3

Տիրաժ 5000

Հանձնված է արտադրության 19/XII 1939 թ.:

Ստորագրված է տպադրության 31/I—1960 թ.:

Թուղթ 90×92^{1/32}: Տպագրական 1,5, մամուլ = 1,75 պայմ.

Ժամ.։ Հրատարակչական 1,3 մամուլ։

Գինը 40 կ.։

ՀԱՍՈՒ Կուլտուրայի մինիստրության Հրատարակությունների

և պոլիգրաֆիարդյունաբերության Գլխավոր վարչության

Պոլիգրաֆիկումբինատ, Երևան, Տերյան թ1: